ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 94-Ա

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թ.

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 1544-Ն որոշման և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, Կապան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2022 թվականի ծրագիրը՝ ընդհանուր 8147,9 հազար դրամ արժողությամբ, այդ թվում՝ բնապահպանական միջոցառումների մասով – 7397,9 հազար դրամ և առողջապահական միջոցառումների մասով – 750,0 հազար դրամ, համաձայն հավելվածի:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2022 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

Կողմ(9)՝

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐԵՆ	ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ	ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՆԱՍ	ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ԻՎԱՆ	ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ	

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2021թ. <u>օգոստոսի 09</u>

ք. Կապան

Հավելված
Կապան համայնքի ղեկավարի
2021 թվականի օգոստոսի 9-ի թիվ 94-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԿԱՊԱՆ – 2021

ՆԱԽԱԲԱՆ

Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2022 թ. ծրագիրը կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկերի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի /ՀՕ-188, 15.05.2001թ./, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 26-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առաջարկվող բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունը և դրանց ֆինանսավորման համամասնությունները ՀՀ Բնապահպանության նախարարության ու ՀՀ Առողջապահության նախարարության հետ համաձայնեցնելու կարգը հաստատելու մասին» N 1544-Ն և 2014 թվականի փետրվարի 27-ի «Բնապահպանական ծրագրերի մշակման (նախագծման) կարգը հաստատելու մասին» N 197-Ն որոշումների պահանջներին համապատասխան:

Նախատեսվող ծրագրի խնդիրները, նպատակները և կենսագործման անհրաժեշտությունը՝

Բնապահպանական մաս- Կապանը Հայաստանի Հանրապետության լեռնահանքային արդյունաբերական կենտրոններից մեկն է: Պղնձի և բազմամետաղային հանքավայրի երկարամյա շահագործումը, շրջակա տարածքներում իրականացված և իրականացվող երկրաբանահետախուզական աշխատանքները, խոշոր պոչամբարների առկայությունը, հին հանքախորշերի փլուզման վտանգները, սողանքային ակտիվությունը, ժամանակին կատարված՝ տարածքի անտառների անկանոն հատումները, համայնքի միջով անցնող և խոշոր բեռնատարների երթևեկությամբ ծանրաբեռնված միջազգային ավտոմայրուղին համայնքի բնության և բնակչության առողջության համար էկոլոգիական մեծ ռիսկեր են պարունակում:

Տրանսպորտային միջոցների թվաքանակի մեծացումը, ծանրաբեռնված մայրուղու՝ քաղաքի կենտրոնով անցնելու հանգամանքը փողոցների կանաչապատման, ծառատնկման, մայթերի բարեկարգման, ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները ընդլայնելու անհրաժեշտություն է առաջացրել: Կապան քաղաքի կենտրոնական փողոցների (Չարենցի, Ա. Մանուկյան, Գ. Նժդեհ, Մ. Ստեփանյան) մայթերին 1955-1960 թվականներից որպես դեկորատիվ տնկված ծառատեսակները ներկա դրությամբ արդեն ծերացել են, բները հաստացել: Իսկ որոշ ծառեր չորացել կամ գտնվում են կիսաչոր վիճակում: Ամեն տարի ուժեղ քամիների ժամանակ ջարդվում են և ընկնում գետնին, վտանգ ներկայացնելով երթևեկող տրանսպորտային միջոցների և հետիոտնի համար: Ծառերի արմատները հորիզոնական աճելով խարխլել են մայթերի սալիկները և հողաշերտը բարձրացնելով անհարմար և դժվարանցանելի են դարձրել: Բնակիչները բազմիցս դիմել են համայնքապետարան՝ հարցի լուծման համար միջոցներ ձեռնարկելու խնդրանքով: Հատկապես գիշերային ժամերին վտանգավոր է դարձել բնակչության տեղաշարժը այդ հատվածով: Հնարավոր չէ այդ մայթերով մանկասայլակի կամ հենասայլակի տեղաշարժը, ինչը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում երեխամայրերի և հենաշարժողական խնդիրներ ունեցող մարդկանց համար: Մայթերի անմխիթար վիճակի հիմնական պատճառը ժամանակին ոչ ճիշտ ընտրված ծառատեսակներն են: Ծառերը թե՛ արմատների աճի ձևով, թե՛ իրենց սաղարթով և բների չափերով չեն համապատասխանում մայթերին տնկելու համար պահանջվող չափանիշներին:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքարը, որը ներառում է մթնոլորտային օդի պահպանության աշխատանքներ և միջոցառումներ: Համայնքը նախատեսում է բարեկարգել նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամրջի միջև ընկած հատվածի մայթը: Աշխատանքներով հիմնականում նախատեսվում են մայթի հին ծառերի հանում արմատներով, մայթի նորոգում և նոր՝ իրենց հատկանիշներով և չափանիշներով մայթերի համար նախատեսված ծառատեսակների տնկում, երկու դիտահորերի մտոցների տեղադրում, հին եզրաքարերի քանդում, նոր եզրաքարերի տեղադրում, հենասյուների պողպատե խողովակների ներկում, լուսատուների տեղադրում, հին բազրիքների ապամոնտաժում, նոր բազրիքների կառուցում: Հարկ ենք համարում նշել, որ աշխատանքների իրականացման արդյունքում անհամեմատ կնվազի տվյալ հատվածում փոշու քանակը: Նշված աշխատանքները հանդիսանում են նախկինում իրականացված աշխատանքների շարունակությունը, քանի որ 2013-2019թթ ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկից համայնքի տրամադրվող մասհանումներից իրականացվել են հենց մայթերի բարեկարգման աշխատանքներ՝ նորոգվել է Կապան համայնքի Ողջի գետին կից Արամ Մանուկյան փողոցի մայթը՝ հին ծառերը փոխարինվել են նորերով, ինչը դրական ազդեցություն է ունեցել թե՛ մթնոլորտային օդի մաքրության և պահպանության, թե՛ մայթի բարեկարգ ու գեղեցիկ տեսքի առումով և հանդիսանում է բնակիչների զբոսնելու սիրելի վայրը:

Ծրագրով նախատեսվում է արմատներով ամբողջությամբ հեռացնել 9 հատ ծառ, ինչի փոխարեն կտնկվեն մայթերի համար նախատեսված 9 հատ կատալպա: Համայնքապետարանը՝ կոմունալ ծառայության միջոցով իր վրա է վերցնում ծառերի հետագա խնամքը՝ ջրում, պահպանություն և այլն:

Այսինքն, Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2022 թվականի ծրագրի բնապահպանական մասի խնդիրը նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամուրջի միջև ընկած հատվածի մայթի անմխիթար վիճակն է, ինչը բացասական ազդեցություն է ունենում մթնոլորտային օդի մաքրության և պահպանության վրա: Ներկայիս վիճակը շտկելու, մթնոլորտային օդը մաքուր պահելու նպատակով համայնքը նախատեսում է բարեկարգել վերոհիշյալ մայթը:

Առողջապահական մաս - Կապան համայնքում գործում են 16 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Համայնքը պարբերաբար միջոցներ է ձեռնարկում նախադպրոցական ուսումնական հաստատությունների առջև ծառացած խնդիրների լուծման, շենքային պայմանների բարելավման ուղղությամբ: 2022 թվականի «Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման» ծրագրի առողջապահության մասի միջոցառումների շրջանակում Կապանի համայնքապետարանը նախատեսում է նորոգել Կապան քաղաքի թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատության բուժկետը և մեկուսարանը, որը գտնվում է անմխիթար վիճակում: ՆՈՒՀ-ը գտնվում է քաղաքի ծայրամասային, սակայն մեծ բնակչություն ունեցող թաղամասերից մեկում: ՆՈՒՀ-ը կառուցվել է 1979 թվականին, բուժկետը երբեք չի հիմնանորոգվել: Ունի 106 սան:

Այսինքն միջոցառման խնդիրը թիվ 2 ՆՈՒՀ-ի բուժկետի անմխիթար վիճակն է: Խնդիրը լուծելու նպատակով նախատեսվում է նորոգել այն:

Արդյունքում կբարձրացվի ՆՈՒՀ-ի սաներին տրամադրվող բուժօգնության մակարդակը, երեխաները կսպասարկվեն բարվոք պայմաններում:

Ծրագրի առաջնայնությունները սահմանվել են նկատի ունենալով համայնքում բնահպանական և առողջապահական ակնառու խնդիրների առկայությունը, ինչպես նաև՝

հաշվի առնելով համայնքի և շրջակա տարածքների վրա լեռնահանքային արդյունաբերության բացասական ազդեցությունը,

համոզված լինելով, որ հնարավոր չէ համայնքի կայուն զարգացումը առանց բնապահպանական բաղադրիչի,

գիտակցելով մարդու լիարժեք կենսագործունեության համար էկոլոգիական անվտանգության ապահովման կարևորությունը:

2010 թվականին Կապան քաղաքում «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրով իրականացվել է «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարածքում սեպտիկ թափոնների, թաղման փոսի և սրածայրի կառուցում: 2011-2012 թվականներին իրականացվել են Ողջի գետի մաքրման աշխատանքներ: Ինչպես արդեն նշվել է՝ 2013-2019թթ «Շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության» ծրագրով իրականացվել է Կապան քաղաքի Արամ Մանուկյան փողոցի մայթի բարեկարգման, ծառերի էտման, հատման, ծառատնկման և տարածքի կանաչապատման ու վերանորոգման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվել են ոչ միայն պետական բյուջեի, այլ նաև համայնքի բյուջեի և դոնոր կազմակերպությունների կողմից հատկացված գումարներով: 2019 թվականին Արամ Մանուկյան փողոցի մայթի բարեկարգման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են և այն հանդիսանում է կապանցիների զբոսանքի սիրելի վայրերից մեկը, իսկ ստեղծված կանաչ տարածքները դրական ազդեցություն են ունենում մթնոլորտային օդի մաքրության վրա: 2020 թվականին, ինչպես հանրապետության այլ համայնքներում, այնպես էլ Կապանում, շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիր չի իրականացվել: Ներկայումս ընթացքի մեջ է 2021 թվականի ծրագիրը՝ Վաչագան գետի վրա ջրավազանի կառուցումը:

Նախորդ տարիներին առողջապահական ծրագրերի մասով վերազինվել են համայնքի ՆՈՒՀ-երի և մարզադպրոցների բուժկետերը, ինչպես նաև նախկինում լեյշմանիոզի դեպքեր արձանագրած թաղամասերում իրականացվել են աղբարկղների և օրգանական աղբի կուտակումների մշակումներ /ախտահանում/՝ երկարատև մնացորդային ազդեցության միջատասպան նյութերով: Առողջապահական միջոցառումներն իրականացվում են համայնքի բյուջեի միջոցների հաշվին 2021 թվականին նախատեսվել է Արծվանիկ բնակավայրի բուժկետի համար տրամադրել տարածք և նորոգել այն: Աշխատանքները նախատեսվում է իրականացնել սուբվենցիայի ծրագրերի շրջանակներում՝ ՀՀ պետական և համայնքային բյուջեների ֆինանսավորմամբ:

Ծրագրի ակնկալվող արդյունքները՝

Նպատակ 1 Շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար

Խնդիր 1 Մթնոլորտային օդի բարելավում, պահպանություն, աղտոտվածության նվազեցում

Գործողություն 1 Կապան համայնքի Կապան քաղաքի նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամուրջի միջև ընկած հատվածի մայթի բարեկարգում՝ հին ծառերի կտրում, արմատների հանում և նոր ծառատեսակների տնկում, մայթի նորոգում /աշխատանքային ծավալները կցվում են/:

Արդյունք ա/ մթնոլորտային օդում փոշու և տրանսպորտային միջոցների արտանետումների խտությունների նվազում:

բ/ Քաղաքի գեղեցիկ տեսքի վերականգնում:

գ/ Բնակիչների համար հարմարավետ և անվտանգ տեղաշարժ:

Խնդիր 2 Առողջապահական համակարգի հզորությունների ուժեղացում

Գործողություն 1 Կապան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ-ի բուժկետի և մեկուսարանի նորոգում:

Արդյունք ա/ կբարելավվի թիվ 2 ՆՈՒՀ-ի սաներին մատուցվող բուժօգնության մակարդակը:

բ/ Կբարձրանա երեխաների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:

Իրագործման փուլերը / ժամանակացույցը/

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ընթացքում՝ փետրվարից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Իրականացման համար անհրաժեշտ ծախսերը

Բնապահպանական հարկից համայնքի բյուջե մասհանվող գումարով՝ 7 397 900 ՀՀ դրամով, նախատեսվում է նորոգել վերահիշյալ մայթը: Թիվ 2 ՆՈՒՀ-ի բուժկետի և մեկուսարանի նորոգման աշխատանքները կիրականացվեն համայնքի բյուջեի հաշվին, կամ այլ ֆինանսական միջոցներով: Այդ աշխատանքների համար անհրաժեշտ գումարը կազմում է մոտ 750 000 ՀՀ դրամ: Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանության 2022 թվականի ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8 147 900 ՀՀ դրամ /ֆինանսավորման աղբյուրների և համաֆինանսավորման համամասնությունների վերաբերյալ տեղեկատվությունը կցվում է/:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի իրականացմամբ կլուծվեն համայնքի համար կարևոր՝ նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամուրջի միջև ընկած հատվածի մայթի և թիվ 2 ՆՈՒՀ-ի բուժկետի և մեկուսարանի նորոգման խնդիրները:

Ծրագրի իրականացումը կնպաստի համայնքի բնակչության համար մաքուր, առողջ և անվտանգ կենսամիջավայր ստեղծելուն, ինչպես նաև դրական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ*

Հաստատում եմ
Կապան համայնքի ղեկավար
_____ Գևորգ Փարսյան
<< 09 >> օգոստոսի 2021թ.

Կապան համայնքի 2022 թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները, ֆինանսավորման համամասնությունները և ակնկալվող արդյունքները

N	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ	Համամասնությունը %	Ակնկալվող արդյունքները
I	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	7397,9	90,8	ա/ մթնոլորտային օդում փոշու և տրանսպորտային միջոցների արտանետումների խտությունների նվազում: բ/ Քաղաքի գեղեցիկ տեսքի վերականգնում: գ/ Բնակիչների համար հարմարավետ և անվտանգ տեղաշարժ:
Շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար՝ ջրային ռեսուրսների պահպանություն		7397,9	90,8	
1	Կապան քաղաքի նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամուրջի միջև ընկած հատվածի մայթի նորոգում	7397,9	90,8	
II	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	750,00	9,2	ա/ կբարելավվի թիվ 2 ՆՈՒՀ-ի սաներին մատուցվող բուժօգնության մակարդակը: բ/ Կբարձրանա երեխաների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներն ապահովող գործընթացների մակարդակը:
1	Կապան համայնքի Կապան քաղաքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի բուժկետի և մեկուսարանի նորոգում	750,00	9,2	
ԸՆԴԱՄԵՆԸ		8147,90	100	

Աղյուսակ 1

Կապան համայնքի 2022թ. շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագիրի ֆինանսավորման աղբյուրները

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Ծրագրի արժեքը, ընդամենը /հազ. դրամ/	Այդ թվում ըստ ֆինանսավորման աղբյուրների՝			Ծանոթություն
			պետական բյուջե /հազ. դրամ/	տեղական բյուջե /հազ. դրամ/	այլ /հազ. դրամ/	
I	**Բնապահպանական միջոցառումներ**	7397,9	7397,9	0,0	0,0	
1	Շրջակա միջավայրի աղտոտվածության դեմ պայքար՝	7397,9	7397,9	0,0	0,0	
1.1	Կապան քաղաքի նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամրջի միջև ընկած հատվածի մայթի նորոգում	7397,9	7397,9			Նախատեսվում է նորոգել ընդհանուրը 340 քմ տարածք, որից 331քմ տարածք՝ մայթի ասֆալտապատում, 9 քմ տարածք՝ կանաչապատման համար նախատեսվող տարածք, նախատեսվում է տնկել 9 հատ կատալպա, /նախատեսվող միջոցառումների աշխատանքային ծավալները կցվում են/
II	**Առողջապահական միջոցառումներ**	750,00	0,00	0,00	750,00	
1	Կապան քաղաքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի բուժկետի և մեկուսարանի նորոգում	750,00			750,0	Հին փայտե լուսամուտի և դռան ապամոնտաժում, մետաղապլաստե լուսամուտի և դռան տեղադրում, հին լվացարանի ապամոնտաժում, նոր լվացարանի տեղադրում, մանրահատակի քանդում, լամինատե հատակի կառուցում, լուսատուների փոխում, պատերի ներկում, առաստաղի ներկում, 1 հատ անջատիչի փոխարինում
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	8147,90	7397,90	0,00	750,00	

Աշխատակազմի քարտուղար՝ **Նելլի Շահնազարյան**

Աղյուսակ 2

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՎԱԼՆԵՐ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ՄՍԻ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ ԵՎ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԿԱՄՐՋԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾԻ ՄԱՅԹԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Արժեքը /հազ. դրամ/
1	Ծառերի հատում և հանում /d=600-700մմ/ և նոր ծառերի /կատալպայի/ տնկում	հատ	9	200,01
2	Դիտահորերի մտոցների տեղադրում /ф=700մմ/	հատ	2	158,45
3	Հին եզրաքարերի քանդում	գծ/մ	200	176,05
4	Նոր եզրաքարերի տեղադրում	գծ/մ	200	1422,45
5	Հենասյուների ներկում և լուսատուների տեղադրում /D=150մմ, h=9մ/	հատ	7	121,65
6	Հին բազրիքների ապամոնտաժում	գծ/մ	200	96,05
7	Նոր բազրիքների պատրաստում և տեղադրում	գծ/մ	200	510,45
8	Մայթի ասֆալտապատում	ք/մ	331	4366,45
9	Աղբամանների տեղադրում	հատ	7	78,45
10	Կանաչապատման ենթակա տարածքների եզրաքարերի տեղադրում	գծ/մ	36	267,89
Ընդամենը				**7397,9**

Աշխատակազմի քարտուղար **Նելլի Շահնազարյան**

Համաձայնեցված է
Շրջակա միջավայրի նախարարի
պաշտոնակատարի պարտականությունները
կատարող
_____ Ա. Մազմանյան
«14» դեկտեմբեր 2021թ.

Հավելված

Կապան համայնքի 2022թ.

բնապահպանական ծրագրի

Կապան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Կապան համայնքի 2022 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Գումարը /հազ. դրամ/	Համամասնությունը%
1	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	7397.9	90.8
1.1	*Կապան քաղաքի նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամրջի միջև ընկած հատվածի մայթի նորոգման, կանաչ տարածքների վերականգնման, բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ*	7397.9	90.8
2	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	750	9.2
	ԸՆԴԱՄԵՆԸ	8147.9	100.0

Համաձայնեցված է

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի պաշտոնակատար

Անահիտ Ավանեսյան

«_____» _____ 2021թ

Հավելված

«Կապան համայնքի շրջակա միջավայրի և բնակչության
առողջության պահպանման» 2022թ ծրագիր

Կապան համայնքի 2022 թվականի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց դիմաց ֆինանսավորման համամասնությունները

Կապան համայնքի 2022թվականի բնապահպանական և առողջապահական ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման առաջնայնությունները, ֆինանսավորման համամասնությունները և ակնկալվող արդյունքները

N	Միջոցառման անվանում	Գումարը /հազ. դրամ	Համամասնություն %
I	ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ	7397,9	90.8
Շրջակա միջավայրի կլիմայական և պարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար՝ ջրային ռեսուրսների պահպանություն		7397,9	90,8
1	Կապան քաղաքի նախկին մսի կոմբինատի դարպասներից մինչև Շահումյան և Սպանդարյան փողոցների հատման կամուրջի միջև ընկած հատվածի մայթի նորոգում	7397,9	90,8
II	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	750,00	9,2
1	Կապան համայնքի Կապան քաղաքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի բուժկետի և մեկուսարանի նորոգում	750,00	9,2
ԸՆԴԱՄԵՆԸ		8147,90	100